Պայքարն ավարտված չէ, այն նոր է սկսվում

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը Թուրքիայի, Իսրայելի, Պակիստանի և տասից ավելի այլ երկրների աջակցությամբ լայնամասշտաբ պատերազմ սանձազերծեց Արցախի Հանրապետության դեմ: Երեք տարվա ընթացքում Ադրբեջանը, ստանալով վերոնշյալ պետությունների աջակցությունը, ցեղասպանում է Արցախի հայությանը:

Ցանցային Պետությունը հայտարարում է, որ որևէ վարչախումբ, լինի դա ադրբեջանական, թուրքական, ռուսական կամ այլն, որևէ իրավունք չունի հազարամյակներով Արցախում բնակված հայերին ցեղասպանել, տեղահանել իր բնօրրանից՝ կոպտորեն խախտելով հայոց ազգի՝ Արցախում ապրելու բնական և պատմական իրավունքները:

Ցանցային Պետությունը ճանաչում է առոչինչ 2023թ.-ի սեպտեմբերի 28-ին Արցախի Հանրապետության նախագահ Սամվել Շահրամանյանի հրամանագիրը Արցախի Հանրապետության գոյության դադարեցման վերաբերյալ, որը խստորեն հակասում է մարդու բնական և պատմական իրավունքներին:

Ցանցային Պետությունը շարունակում է պայքարը հայկական գործոնի բարձրացման, տոկուն և հարատև հայկական համակարգ ստեղծելու ուղղությամբ և կոչով դիմում է աշխարհի բոլոր ծագերում ապրող հայորդիներին՝ լծվելու հոգևոր, մտավոր և նյութական ուժերի միավորման հրատապ գործին՝ իրենց տրամադրության տակ ունենալով Ցանցային Պետության հարթակը:
Պայքարն ավարտված չէ, այն նոր է սկսվում:

Բոլորիս կամք, տոկունություն, հետևողականություն և պատասխանատվություն:

Վահրամ Այվազյան
Ցանցային Պետության հիմնադիր և խորհրդի նախագահ